

ՆՅՈՒԹԵՐ ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

1983 թ. գտնվելով գիտական գործունեության մեջ Կրետե կղզու համալսարանում, հունական գիտական պարբերականներից և տարեգրքերից թաղել ենք ուշագրավ նյութեր Հունական կղզիներում, Փոքր Ասիայի արևմտյան շրջաններում և Հունաստանում ամփոփված հայ գաղթականության մասին: Ժամանակագրական առումով այդ նյութերն ընդգրկում են միջնադարից մինչև մեր դարի առաջին տասնամյակները:

Հրապարակվող նյութերը ուշագրավ տեղեկություններ են հաղորդում դեպի նշված վայրերը հայերի տեղաշարժերի, նրանց զբաղմունքների, տեղական կյանքին նրանց ցուցաբերած մասնակցության, հոգևոր-մշակութային կյանքի, հույն և այլ ժողովուրդների, ինչպես նաև հայ-բյուզնդական հետ ունեցած կապերի մասին: Նյութերը հրատարակվում են երեք հավաքածուներով՝ «Նյութեր գաղութահայ պատմության» ընդհանուր խորագրի տակ, յուրաքանչյուր հավաքածու՝ «Ումեթական հերթական համարակալմամբ (I—III):

Հրապարակվող նյութերը մատուցվում են հունական գիտական հանդեսների հոդվածներից, հրապարակումներից և աուանձին դրքերից կատարված ուղղակի թարգմանությամբ և անոտա-ծիաներով:

ՀՐԱՁ ԲԱՐԹԻԿՅԱՆ

I

N. I. ΓΙΑΝΝΟΠΟΥΛΟΥ, 'Η μεσαιωνική φθιῶτις καὶ τὰ ἐν αὐτῇ μνημεία· Δελτίον τῆς ἱστορικῆς καὶ ἐθνολογικῆς ἐταιρείας τῆς 'Ελλάδος, τόμος 8, 1922, σελ. 85—93.

Ն. Ի. ԳԱՆՆՈՊՈՒԼՈՍ, Միջնադարյան Ֆթիոտիսը և նրա հուշարձանները, Հունաստանի պատմական և ազգագրական ընկերության տեղեկագիր, հատոր 8, Աթենք, 1922, էջ 85—93:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԱՄԻՐՈՍՈՒՄ

Ա. ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1900 թ. հոկտեմբերի 5-ին, գնալով Պլատանոս, Ալմիրոսից մեկ ժամ ճանապարհ հարավ ինկած մի գյուղաքաղաք, Օթրիոս լեռան ստորոտը, այնտեղի Սուրբ Հովհաննես Կարապետ եկեղեցու մի խուցում հայտնաբերեցի գորշագույն տեղական քարից պատրաստված, աշուձախ խայրերը ջարդված ուղղանկյուն մի սալ, որի կողերից մեկում կար անծանոթ տառերով գրված երեք տողանոց արձանագրություն: Սալն ունի 0.99 մետր երկարություն, 0.40 լայնություն և 0.35 հաստություն: Սալը բերվեց Ալմիրոսի թանգարանը, որտեղ նկարվեց և հրապարակվեց «Օթրիոս» հասանք ընկերության «Տեղեկագրում» (պրակ 9, էջ 32, նկ. 1):

Հայերեն արձանագրությունը

ՏԱՊԱՆՍ ԴԱՇՏՅԻ

ԱՎԱԳԻ ՈՐԴԻ ԿԱՐ

ԱՊԵՏԻՆ ԹՎ ԴՃԽ

Այս արձանագրության մասին հաղորդվեց Աթենքի՝ այն ժամանակվա Հնությունների գլխավոր վարչությանը, Աթենքի Ֆրանսիական և Գերմանական ինստիտուտների և Գերմանիայի Ռոստոկ թաղաքում բնակվող պրոֆեսոր Օթոն Կեռնին: Ըստ մեր [հուլիս] հնագետների, արձանագրությունը եթովպերեն է, իսկ Ֆրանսիական ինստիտուտի գիրեկտոր պրն. Homoll-ն առաջա-թե Փարիզի մի նշանավոր արևելագետի կարծիքով արձանագրությունը հին հայերեն է, որի

իմաստն է. «Սա այսինչի, այսինչի որդու գերեզմանն է: Գերմանացիներն էլ ասացին, թե փյունիկերեն է: Պարոն Կեռնը, դիմելով Ստրասբուրգի պրոֆեսոր պարոն Հյուրշմանին, ասաց, թե հայերեն է: Նույն Կեռնը, դիմելով Վիեննայի հայազգի պրոֆեսոր պարոն Տաշյանին, ինձ գրեց, թե հայերեն ուշ տապանաքար է, որի արձանագրության իմաստն է.

«Մա Դաշտցի Կարապետի տապանն է, որդուն Եգիպի, թվին 1140 (=1691 թ.):»:

Այս ընթերցումը ես տպագրեցի «Օթրիոս» հասանելի ընկերության «Տեղեկագրում» (պրակ Ե, էջ 16) հանդերձ Տաշյանի՝ մեզ տված տեղեկության, թե հիշյալ «Տեղեկագրում» (պրակ Գ, էջ 32, նկ. 1) արձանագրությունը տպագրվել է պառկած դիրքում:

Բայց նախքան հայտնի կդառնար պարոն Տաշյանի ընթերցումը, Վոլոսի հասանելի պարոն Պատրիկյոս Պալամիդասը Վոլոսում՝ վանական Զոսիմոս էսֆիգմենիտեսի հրատարակած «Պոմեթես» հանդեսում (1901 թ. 154-րդ թերթի հավելվածում, էջ 10—13) վերահրատարակեց խնդրո առարկա արձանագրությունը: Իր այս ուսումնասիրության մեջ պարոն Պալամիդասը, նկատի ունենալով և «Օթրիոս» հասանելի ընկերության հրատարակությունը, արձանագրությունը համարեց պեղագրերն:

Աթենքի Ազգային համալսարանի պրոֆեսոր պարոն Ս. Լամբրոսը իր «Խառն էջեր» աշխատության մեջ (էջ 844) նկարագրում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզին, այնտեղ գտնվող Մխիթարյանների վանքը², և խոսում խնդրո առարկա արձանագրության մասին, որ ցույց էր տվել վանական պարոն Էփրիկյանին: Նա առանց դժվարության այն հայերեն համարեց, ընթերցելով և հետևյալ երկու բառերը. «ոստի» և «Hairabedim»: Առաջինը, համաձայն նրան, նշանակում է «որդի», իսկ երկրորդը հատուկ անուն է: Պարոն Էփրիկյանը, սակայն, որ շատ հեշտությամբ կարգաց այս երկու բառերը, վերապահ մնաց՝ ընթերցելու այն ամբողջությամբ և որոշել նրա ժամանակը:

Եգիպտոսի Ժախոտի Սարգիսյան առևտրական մեծ տան Վոլոսի ներկայացուցիչ հայազգի պարոն Մորուբյանը, 1903 թ. այցելելով Ալիքոսի թանգարան, ծանոթացավ այս արձանագրության, նկարեց այն և, խոշորացուցի օգնությամբ Վոլոսում ընթերցեց և իր ընթերցման արդյունքները գրեց ինձ հայերեն 1903 թ. հոկտեմբերի 28 թվակիր իր նամակում: Այն է.

«Տապանս դաշտցի Ավագի որդի՝ Կարապետին»³, «Իսկ թվականն է հայոց 1140 թ., այսինքն արձանագրությունը 211 տարեկան է»:

Եվ, վերջապես, Սուրբ Ղազար կղզու Մխիթարյանների հայկական վանքի ամենասուրբ հայր պարոն Բարսեղ Սարգիսյանը 1907 թ. հոկտեմբերի 25 թվակիր ինձ հասցեագրված նամակում գրում է, թե քարը մաշված լինելու պատճառով «Մեսախի» և «Ավագի» բառերը դժվարությամբ են ինչ վերարևրում է արձանագրության թվականին, պարոն Սարգիսյանը համաձայն է նախորդներին, ընթերցելով նրանում հայոց 1140 թ., որի վրա պետք է գումարենք 551 կամ 552, որով ստացվում է մ.թ. 1691 կամ 1692 թ.: Նա արձանագրությունն ընթերցում է այսպես.

«Տապանս դաշտցի Ավագի որդի Կարապետին», որին հետևում է 1140 թվականը: Արձանագրությունը նա ֆրանսերեն թարգմանում է այսպես.

«Ce tombeau (est) du Karapiète fils d'Avak de Dast année 1140»:

Իր նամակում պարոն Սարգիսյանը գրում է. «Մարմարից պատրաստված այգյախի մեծ հուշարձան 17-րդ դարում պետք է որ ոչ սովորական մարդու համար պատրաստված լինի: Բոլոր դեպքերում Կարապետը, որ թաղված է այնտեղ (Պլատանոսում), պետք է որ անվանի սարգ եղած լինեք, կամ գրաված դիրքով, կամ էլ Պլատանոսի համար ունեցած իր ծառայություններով: Դա հետաքրքրություն է ներկայացնում հայերի Հունաստան գաղթելու պատմության համար: Դա պարզ կդառնար նաև, եթե ցանկանայիք որոշումներ կատարել և գտնել հարցին վերաբերող պատմական տեղեկություններ Պլատանոսի և Ալիքոսի հանրային և եկեղեցական գրիվաններում»:

¹ Mitteilungen Athen., t. XXVI, p. 452.— Otto Kern, in Wochenschrift für Klassische Philologie, 1901, № 7, p. 178.

² Մխիթարյանների վանքը հայկական է, այնտեղ ապրում են հայ կաթոլիկ վանականները: Նրանք զարգացած մարդիկ են, հայկական կղերի առավել զարգացած դասը, բազմազետ և լեզվագետ, որոնք ունեն տպարաններ և այլն:

³ Պարոն Լամբրոսը գրում է «ոստի»:

⁴ Պարոն Լամբրոսը գրում է «Հայրապետին»:

Դժբախտաբար ավերիչ ժամանակը ոչինչ չի պահպանել, հատկապես Պլատանոսում, որը 1821 թվականից չորս անգամ հրդեհվել է:

Այդուհանդերձ հենց վերջերս պարոն Դիմիտրիոս Յուպոսսին հաջողվեց Թեսալիայում հայտնաբերել մի աղբյուր, որտեղից նա իր ուսումնասիրության համար Նյութեր է քաղում: Կոստանդնուպոլսի պատրիարք Մաքսիմոս Գ-ը Վենետիկի դոժին ուղղած իր 1480 թվակիր նամակում հիշում է Թեսալիայում բնակվող հայերի նամակում դրված է հետևյալը. «Եթե մեծ ամենաբարձրալ աբրեժ, լինելով այլ կրոն դավանող, քրիստոնյաներին և բոլորին թույլ է տալիս ունենալ մտքի և կրոնի ազատություն, և անցյալ տարի, իմանալով, որ Մեծ Վալախիայում⁷ բռնանում են հայերի վրա նրանց ուղղափառ (իմա՝ քաղկեդոնական— Հ. Բ.) դարձնելու համար, և այդ առթիվ նամակ գրեց և ուղարկեց՝ սահմանելով, որ կրոնի ազատությունը Աստուծո օրենքն է: Դադարեցրեց այդ վարում տեղի ունեցող հալածանքը, առավել ևս արդար է, որ դուք այդպես վարվեք»:

Սրանից ստացվում է, որ 1480 թվականից առաջ Թեսալիայում հաստատված հայեր կային, հայտնի չէ ո՞րտեղից եկած և ինչպե՞ս, և որ նրանցից շատերը պիտի որ գոյություն ունենային մինչև 17-րդ դարի վերջը, ժամանակ, որին է վերաբերում Հիշյալ արձանագրությունը: Կոստանդնուպոլսի պատրիարք Մաքսիմոս Գ-ի նամակից ժամանակի առումով այնքան էլ հեռու չէ և մեր կողմից ստորև հրապարակվող Հեթում և Կալիսոսով թագավորների հայկական դրամը, որովհետև 1300—1480 թվականների արանքում մնում է շատը—շատը 180—200 տարի, որոնց ընթացքում կարող էր գոյություն ունեցած լինել Թեսալիայի հայկական գաղութը:

Սակայն Թեսալիայում հայերի գոյության մասին կա ևս մի ապացույց: Ալմիրոսից կիս ժամ ճանապարհ դեպի Հյուսիս կա Կուրֆալի դուղը, որն անցյալում թուրքական էր՝ ըստ իր տարեց բնակիչների ավանդածի, և որովհետև մինչև վերջերս այնտեղ կար մզկիթ, ինչպես և քուրթական գերեզմանատուն: Այդ պուղը Ալմիրոսի ուսյալ մի մահմեդական ծերունու ասելով թուրքերեն կոչվում էր Ուլֆանլը՝ ըստ թուրքերի սովորության յուրաքանչյուր անվան վերջում դնելու. տեղանվանական և էթնիկական պատկանելիություն ցույց տվող «լը» ածանցը: Գիտենք, որ Հայաստանում ջրչան կա, որ կոչվում է Ուլֆան, նրա բնակիչը թուրքերեն պիտի կոչվեր Ուլֆանլը, իսկ նրանից իր անունն ստացած պուղը, որը, հարկավ, նրան պիտի պատկանած լիներ, Ուլֆանլը: Իսկ նրա հույն բնակիչները, աղավաղելով այդ անունը, պիտի դարձրած լինեն Կուրֆալի:

Բայց ե՞րբ և ի՞նչ պայմաններում հայ գաղթականությունը հաստատվեց Թեսալիայում: Չգիտենք: Բայց պատրիարք Մաքսիմոսի վերահիշյալ նամակից պարզ է, որ 1480 թ. Թեսալիայում գոյություն ունեի մի մեծ գաղութ, որոնց անդամներին ուղղափառ (քաղկեդոնիկ— Հ. Բ.) բնակիչները ստիպում էին դավանափոխ լինել: Հայերը պիտի որ դիմած լինեին իրենց պատրիարքարանին, իսկ վերջինս՝ Բարձրագույն Դռանը, որը և կյանքի կոչեց խնդրո առարկա հրամանը:

Բ. ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄ

«Օթրիոս» հնասեր ընկերության դրամագիտական ժողովածուում կա մի պղնձե դրամ, որի մի երեսին պատկերված է վարգով դեպի աջ սլացող մի ձիավոր սուրբ՝ գլխին լուսապսակ: Նրա մի ձեռքում ձիու սանձերն են, մյուսում՝ թուր կամ արմավենու ճուղ: Ձիավորի ձախ կողմում ասող է: Ամբողջ պատկերն առնված է գնդիկների շրջանակի մեջ: Ձին, սակայն, իր առջևի ոտքերի ծռած ունի ոչ ինչպես ձին, այսինքն արունքների անկյունները դեպի ներս, այլ դեպի դուրս, ինչպես աքաղաղը: Ձի կարելի ասել, որ ոտքերի նման դիրքը արդյունք է վարպետի անփորձության, քանզի ձին սովորական կենդանի է, որի մասին գաղափար ունի վերջին մարդն անգամ, ուր մնաց վարպետը: Ընթացում ենք, որ գուցե պատկերը ներկայացնում է հիպպալեկտրիոն (ձի-+աքաղաղ), մի սիմվոլիկ կենդանի, որ հաճախ է հանդիպում նախաքրիստոնեական քանդակներում և այլուր, բայց հատկապես որպես քրիստոնեական սիմվոլ՝ քրիստոնեու-

⁵ Δ. Κ. Τσοποτσό, Γγ καὶ γεωργοὶ Θεσσαλίας, ἐν Βελ. 1912, σελ. 39. — Հմմտ. Acta et diplomata graeca medii aevi V, 2, 284.

⁶ Սուլթանը:

⁷ Թեսալիան այն ժամանակ այդպես էր կոչվում:

Բյան առաջին դարերում: Բայց թե խնդրո առարկա դրամի վրա այն որպես ինչ քանդակվեց, չեմ կարող ասել:

Դրամի հակառակ երեսին փոքր զնդիկներից բաղկացած շրջանակում կա եռատող հայերեն արձանագրություն, գրված նոտր գրով: Շատ հավանական է, որ արձանագրությունը բուֆի է, բանգի գրությունը նմանվում է բուֆիին: Այս դրամի մի նկարը ներկայացրին Աթենքի դրամագիտական թանգարանի տնօրեն պարոն Ի. Զվորոնոսին նրա կարծիքն ունենալու համար: Նա պատասխանեց, թե այն հավանական դրամ է՝ Հայաստանի Հեթում և Քալիոստով Բ թագավորների (1237—1246)՝:

Մենք դրամի վերաբերյալ խնդրեցինք իմանալ և սուրբ Ղազար կղզու Մխիթարյանների վանքի անվանի գիտնական հայր Բարսեղ Սարգսյանի կարծիքը, որը շատ սիրալիկ կերպով իր 1907 թ. դեկտեմբերի 25-ի և 1908 թ. ապրիլի 14-ի (նոր տոմարով) նամակներում գրեց մեզ, թե «Քալիոստովը Հայաստանի թագավորը չէր, նա Իկոնիայի սուլթանն էր, որ 13-րդ դարում արշավանքներ էր գործում Հեթումի տարածքի վրա: Ինչ համար շատ հետաքրքիր է իմանալ այդ երկու անունները հանդիպում են միևնույն դրամի վրա, թե՞ այն պատկանում է Հեթումին, և ո՞ր տարում է հատված: Այն ոսկի՞ է, թե՞ արծաթ»:

Հայոց պատմության մեջ հայտնի են Հեթում անունով երկու թագավոր, Հեթում Առաջինը, որ թագավորել է 1226—1270 թթ., երբ հրաժարվելով զահից, մտավ սուրբ Ֆրանցիսկոսի վանական օրդենը, ստանալով Մակարիոս անունը, և Հեթում Բ-ը, որը 1289 թ. ժառանգեց հոր՝ Լեոն Բ-ին և անհավատների դեմ բազմիցս փառավոր հաղթանակներ տարած, 1305 թ. հրաժարվեց զահից և մտավ սուրբ Անտոնի վանքը՝ Կիպրոսում:

Հայ գիտուն հայր Ղևոնդ Ալիշանը հրատարակել է ուրիշ, մեր դրամին գրեթե նման մի դրամ, որի մի երեսին, ձիավորի շուրջը, կարդացվում է հետևյալ հայերեն արձանագրությունը.

ՀԵԹՈՒՄ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

Իսկ մյուս երեսին՝ Իկոնիոնի սուլթան Քալիոստովի արձանագրությունը՝ արաբերեն: Հետևաբար այս դրամը, որ հրատարակվել է Մխիթարյան հայրերի հանդեսում⁹, պատկանում է ավելի շուտ Հեթում Ա թագավորին և հատվել է 1240—1245 թթ. միջև, ինչպես այդ մասին վկայում է հիշյալի թվականը՝ 636—641: Այս դրամը, որը մեզ համար տարօրինակ մի երևույթ է, պիտի հատված լինի ինչ-որ դաշնակցության առթիվ, այնպես անբացատրելի է¹⁰:

Ելնելով ասվածից, կարելի է ենթադրել, որ Ալմիրոսի թանգարանում պահվող դրամը պատկանում է դրամների այս տիպին, գրեթե նույն ժամանակվա է, առավել կամ պակաս ավելի ուշ, այսինքն, պատկանում է Հայաստանի թագավոր Հեթում Բ-ին, որի փառավոր հաղթանակների մասին տարբեր հեղինակներ հորինել են պատմական հրաշալի, մեծաթիվ շարք կազմող երկեր, ինչպես Sabio թագավորի կազմածները, որոնց մեջ իրար են խառնված Պլուտարքոսն ու Զոնարասը, Հեթումն ու Մարկո Պոլոն, սովորական հունական ժամանակագրությունները, այնպես է այդ միապետի մասին Պալմաթյուցենը, Դոն Հակոբի և սուրբ Ֆերդինանդի թագավորական ժամանակագրությունները և այլն¹¹: Եթե Հայաստանի ինչ-որ շրջանի տեղանուն էլ կրում է

⁹ Յաննոպուլոսի հոդվածում տպագրական սխալ կա, տպված է 1236—1224 (Հ. Բ.):

⁹ Նկատի ունի Մխիթարյանների «Բազմավեպը» (Հ. Բ.):

¹⁰ Բ. Սարգսյանի 1908 թ. ապրիլի 14-ի նամակից. «Այսպիսով, այժմ կարող եմ հավաստիացնել Ձեզ, որ այս դրամը, որ հրատարակվել է Մխիթարյան հայրերի հանդեսում, իրոք պատկանում է Հեթում Ա թագավորին և հատված է մ. թ. 1240—1245 թթ. միջև, ինչպես այդ մասին պարզ ցույց է տալիս հիշյալի 636—641 թթ.»:

¹¹ Antonio Rubio y Lluich, «La lengua y la cultura Catalanas en Grecia en el siglo XIV». — «La fama de sus vestas compilaciones historicas, que formau un ciclo tan numeroso como tan promovidas por el Rey Sabio, donde se mezclan Plutarco y Zonaras, Helthoum, y Marco Polo, las vulgares chronicas reales de D. Jaimes y San Fernando, llegaba hasta los humanistas Italianos del siglo XIV. y su bien provista bibliotheca excitaba la condicia de Goluccio saluto y del Don Jouan I de l'Aragon que tanto como el dictato de amator de la Sabiduria».

այդ¹² անունը, ինչպես գրում է մեզ ամենատուրք հայր պարոն Բարսեղ Սարգիսյանը, դա քննելի է։ Բայց ինչ էլ լինի, Պլատոնոսում գտնված Հեթումի պղնձե դրամն արժանի է ուսումնասիրության, նամանավանդ, որ այն գտնվել է Կեֆալոսիում կամ նրա շրջակայքում, այնտեղ, որտեղ գտնվում են Ֆիոտոսի հին Հալոս քաղաքի և հետագայում կառուցված միջնադարյան հարավային Ալմիրոսի ավերակները։ Բացի այդ, պատմությունից, ինչպես և հայտնաբերվող հրաշալի քանդակազարդ քարերից գիտենք, որ երկու Ալմիրոսներն էլ նշանավոր քաղաքներ էին, զարգացած առևարով և շատ հարուստ, ինչպես այդ մասին դրել է պատմաբան Կոստանդինոս Պապադոպոլոսը։ Գուցե այն ժամանակ այս երկու Ալմիրոս քաղաքներից մեկում գոյություն ուներ հայկական գաղութ, կամ կային Հայաստանից եկած զինվորներ, որոնք այդ տաճարապալի օրերին իրենց հետ բերել էին և Հեթումի դրամները, որոնցից մեկը հանդիսանում է մերը, կամ էլ վկան է Հայաստանի քաղաքների հետ Ալմիրոսի վաճառականների հաստատած կապերի։

Պատրիարքի վերևում հիշված նամակի թվականից շատ հեռու չէ մեր դրամը, որովհետև եթե այն թվագրվում է, ինչպես վերևում ասացինք 13-րդ դարով, արանքում մնում է ընդամենը 180—200 տարվա մի ժամանակաշրջան, երբ կարող էր գոյություն ունեցած լինել Թեսալիայի հայկական գաղութը, որի անդամներն էլ բերած պիտի լինեին վերահիշյալ դրամը։ Այդ հայության մնացորդները Թեսալիայում պիտի պահպանված լինեին մինչև 17-րդ դարի վերջը, որին է վերաբերում վերոբերյալ հայկական արձանագրությունը։

ΑΡΧΙΜΑΝΔΡΙΤΗΣ ΝΙΚΟΛΑΟΣ ΒΑΦΕΙΔΗΣ, 'Ιστορία τῆς ἀρμενικῆς κοινῆς τητος Διᾱπορεύσεως καὶ ὁ βυζαντινὸς νοσὸς τοῦ ἁγίου Γεωργίου τοῦ Παλαιοκαστρούτου, — «Θρακικά», σὺγγράμμα περιοδικῶν ἐκδοδόμενον ὑπὸ τοῦ ἐν Ἀθήναις «Θρακικοῦ κέντρου», τόμος ὀγδοὺς, ἐν Ἀθήναις 1937, σελ. 318—329.

ԱՐՔԻՄԱՆԴՐԻՏ ՆԻԿ. ՎԱՖԵԻԴԻՍ, Դիդիմոսիոսի հայ համայնքի պատմությունը և սր. Գեոռգ Պալեոկաստրոսի բյուզանդական տաճարը։ «Թրակիկա», Աթենքի «թրակական կենտրոնի» պարբերական հանդես, հատոր ութերորդ, Աթենք, 1937, էջ 318—329։

1. Հայերի գոյության մասին Դիդիմոսիոսում բյուզանդական ժամանակաշրջանում։ Թրակիայում հայեր կային ոչ միայն Թուրքերի տիրապետության, այլ շատ վաղուց, դեռ բյուզանդացիների ժամանակ։ Մենք այստեղ չենք քննարկելու այն հարցը, թե նրանք կային՝ այստեղ առդյոք հռոմեական շրջանում, թե ոչ։

Բյուզանդական կայսրերը և հատկապես հայկական ծագում կամ հայերի հետ ազգակցական կապեր ունեցողները և կամ, վերջապես, Հայաստանից սերողները, կրոնական, քաղաքական և այլ նկատառումներով հովանավորում էին իրենց պետության սահմաններում ապրող հայերին, հոգ տանում նրանց առաջադիմության և զարգացման մասին։

Բյուզանդական պետության արևելյան նահանգներում և Կոստանդնուպոլսում հայերը հաստատվեցին Թեոդոսիոս Փոքրի ժամանակաշրջանում (408—450 թթ.)։ Այդ ժամանակվանից նրանցից շատերը հունականալով, ձեռք էին բերում պետության բարձրագույն պաշտոնները, անգամ կայսերական գահը։ Մորիկ կայսրը (582—602 թթ.) հրամայեց Թրակիա տեղափոխել և հաստատել բազմաճաղար հայ ընտանիքներ, տալով նրանց ընդարձակ հողեր, իսկ նրանց առաջնորդներին՝ պատիվներ։ Յուրաքանչյուր ընտանիք տալիս էր մեկ հեծյալ, որով պետությունը միայն այս ռազմական գաղութից ստանում էր բազմաճաղար ձիավորներ։

Հայ Լպիսկոպոս Սեբեոսը, որ գրում էր 7-րդ դարում, այդ ընտանիքները հաշվում էր 30 հազար, որոնք տրամադրում էին 30 հազար հեծյալ։

Արարների՝ Հերակլիոս կայսեր օրոք (610—641 թթ.) Հայաստան մուտք գործելուց և իրենց տիրապետությունը հաստատելուց հետո, բազում հայեր ցրվեցին բյուզանդական պետության տարբեր շրջանները։

Կոստանդին 5-րդ Կոպրոնիմոսը (741—775 թթ.), մտահոգված նորաստեղծ բուլղարական պետության առկայությամբ, ամրացրեց Թրակիայի սահմանները, այնտեղ սահմանամերձ շրջաններում, հաստատելով ասորիներից և հայ-պալիկյաններից բազկացած բնակչություն։

Տասներորդ դարում ևս Հովհաննես 2-րդ կայսրը (969—976 թթ.) զրկելու նպատակով

¹² Ըստ երևույթին, խոսքը Հեթում անվանն է վերաբերում (Ղ. Բ.)։

Արևելքի մահմեդականներին իրենց հզոր դաշնակիցներից, Փոքր Ասիայից թրակիա գաղթեցրեց պալլիկյանների և ուրիշների, այդ թվում և հայերի:

Բյուզանդական պետության վերջին շրջանում թրակիայի ամենակարևոր քաղաքի՝ Ադրիանուպոլիսի բազմահազար բնակչության մեջ կային հույներ, լատիններ, հրեաներ, հայեր, այլ արևելացիներ և ուրիշներ (տես էլեֆթերուդակիսի Հանրագիտարանը, հա. Ա, էջ 236):

Վերոնշյալից կարող ենք հաստատել եզրակացնել, որ Դիդիմոտիսոնը ևս, որը բյուզանդացիների ժամանակ շատ նշանավոր մի քաղաք էր, հարկավ, սկզբից ուներ և հայ բնակչություն:

2. Արևելյան Թրակիայի «Էրմենիքյոյ» գյուղը: Ինչպես մեզ հաղորդեց Դիդիմոտիսոնի հայկական համայնքի նախագահ Դեմրզ Փափազյանը, արարների՝ Հերակլիոսի ժամանակ Հայաստան մուտք գործելու շրջանում հայ գաղթականներով բնակեցվեց, կամ գուցե ընդարձակվեց սերկար կամրջի մոտ գտնվող Արմենա գյուղը: Արևելյան Թրակիայի այս գյուղը, որ թուրքական տիրապետության օրոք կոչվում էր էրմենիքյոյ, 1920 թ., հունական զորավան ժամանակ դարձյալ կոչվեց Արմենա:

Արևելյան Թրակիայի մի այլ գյուղ, որը նույնպես էրմենիքյոյ էր կոչվում և գտնվում էր Կապակչա երկաթուղային կայարանի մոտ, անցյալում բազմաթիվ հայ բնակիչներ ուներ, և, ըստ երևույթի, բյուզանդական ժամանակներում կոչվում էր նույնպես Արմենա՝ եթե, հարկավ, այն ժամանակ նա գոյություն ուներ: Սիլիվրիայի Հեքսաստերոնի մոտ գոյություն ուներ և մի այլ ավերակ գյուղ՝ նույն անվամբ:

Թրակիայում, ինչպես և այլուր, կային, հարկավ, և այժմ էլ կան նույն Արմենա կամ էրմենիքյոյ անունով ուրիշ գյուղեր ևս:

3. Դիդիմոտիսոնի հայերը քուրմական տիրապետության ժամանակ Քրդստանի և Փոքր Ասիայի հայկական շրջանների հայերը դեռ հնուց պետական պաշտոնյաներին և քուրդ ֆեոդալներին բազում և ծանր հարկեր էին վճարում՝ աշխատք, ունեցվածքով ու դրամով: Բայց լինելով աշխատասեր և առևտրական շիղ ունեցող մարդիկ, մշտապես զգալի հարստություն էին ձեռք բերում և աստիճանաբար տարածվում դեպի Արևմտյան Փոքր Ասիա և Կոստանդնուպոլիս: Տեղում բազմանալով, անցնում էին թրակիա և Եվրոպական Թուրքիայի այլ շրջաններ, որտեղ, ինչպես ասացինք, դեռ բյուզանդական ժամանակաշրջանից հայեր կային (տես էլեֆթերուդակիսի Հանրագիտարանը՝ նույն տեղում):

Ըստ Հովհաննես Ֆրանցիկոս Generali Careri-ի 1693—1694 թթ. ձեռնագրահանդիսի նոթերի (տես Քրակիկա հանդես, հտ. Գ), Ադրիանուպոլիսը, ինչպես բյուզանդացիների ժամանակ, նույնպես և թուրքերի՝ 17-րդ դարի վերջում, բնակեցված էր հույներով, հրեաներով, հայերով, թուրքերով, վալախներով և այլ ազգություններով: Հետևաբար, այն ժամանակ Դիդիմոտիսոնը ևս ուներ հայ բնակչություն, ինչպես և, դեռ պիտի տեսնենք, դրանից էլ շատ առաջ, քանի որ համաձայն վերևում ասվածի, բյուզանդացիների ժամանակ էլ ուներ:

4. Քրդստանի էգին քաղաքը: Հնում Հայաստանի ամենանշանավոր կենտրոններից մեկը Քրդստանի էգին քաղաքն էր: Այն գտնվում է էլ-Ազիզ նահանգում, էլ-Ազիզ քաղաքից 60 կմ հյուսիս-արևմուտք, Եփրատ գետի արևմտյան ափին, որն այն տեղում կոչվում է Կարա-սու: Էգինի 19.000 բնակիչներից 8.000-ը լինելով հայեր, 1895, 1896 և 1915 թթ. թուրքերի և քրդերի կողմից կոտորվեցին, կամ թողեցին հեռացան այնտեղից: Էգին անունը հայերեն «ակն» (աղբյուր) բառի աղավաղված ձևն է, անուն, որ քաղաքն ստացավ նրա մեջտեղում գտնվող ժայռից բխող աղբյուրից (Կարա-սու): Համաձայն Հանրագիտարանի, քաղաքն այժմ կոչվում է Բասկե: Այդուհանդերձ այսօր էլ գոյություն ունի էգին տեղանունը, որը պիտի հիշեն, բացի Հունաստան և այլուր ապաստանած այնտեղի բնակիչներից, նաև Անատոլիայից արտաքսվածները, ովքեր, ինչպես և մենք, այնտեղով անցանք:

5. Էգին և Էրմենիքյոյ: Ավանդվում է, որ էգինի հայերը հիմնադրեցին, կամ ավելի շուտ՝ ընդարձակեցին Երկար Կամրջի մոտ գտնվող Արմենա կամ էրմենիքյոյ գյուղը, ինչպես և այլ քաղաքներ ու դուռեր: Այս էրմենիքյոյից, ինչպես և այլ տեղերից, տարբեր ժամանակներում հայեր եկան և մնալուն հաստատվեցին Դիդիմոտիսոնում:

6. Էրմենիքյոյից գաղթածները: Դիդիմոտիսոնում 1816 թ. վախճանված հայ քահանա Տեր Դեսպալը ընտանյուր էրմենիքյոյից էր եկել: Նա երկար տարիներ, մինչև իր մահը, ծառայեց Դիդիմոտիսոնի հայկական համայնքում, որպես քահանա: Այն ժամանակ նրա հետ եկել էին ուրիշ ընտանիքներ ևս:

7. Սուրբ Կեորդ բյուզանդական տաճարը և նրանում շովհաննես Խառակոյիկոս կայսեր քաղաքացիները: Դիդիմոսիոսի հայկական համայնքը հին է: Այս ունի մի տաճար՝ Սուրբ Գեորգ՝ միջնաբերդի հարավ-արևելյան ծայրում, շինվելը տեղից ցած, սուրբ Դիդիմոսիոսի ուխտատեղից 150 քայլ հեռավորության վրա: Հայերի այս տաճարը հին է և պատմական. այն բյուզանդացիների ժամանակ էլ էր սուրբ Գեորգ կոչվում: Այն, ինչպես գրում է Շովհաննես Կալանդարյան (կայսրը), կրում էր Պալեոկաստրիտիս մականունը, և վախճանված կայսր Ասորոսիկոս Գ Պալեոլոգոսի ալյուր և Շովհաննես Ե Պալեոլոգոսի մոր՝ Աննա Սավոյացու հետ նրա ունեցած իր հակառակության և քաղաքական տակնապայությունների պատճառով 1341 թ. իր կնոջ՝ Իրենեի հետ հենց այնտեղ (Դիդիմոսիոսիոսում — Շ. Բ.) կայսր թաղարկվեց:

Հոկտեմբերի 26-ն էր, սուրբ Դիդիմոսիոսի օրը, երբ Դիդիմոսիոսի այն ժամանակվա ուղղափառ հույն մետրոպոլիտի կողմից (անունը մեզ հայտնի չէ) տեղի ունեցավ սուրբ պատարագը և կատարվեց Դիդիմոսիոսի քաղաքի կայսրերի թագադրության հանդեսը, Թագադրությանը հաջորդած օրհնարանության մեջ նախ հիշատակվեցին Կոստանդնուպոլսի օրինական բյուզանդական կայսրերի, Աննա Սավոյացու և նրա որդի Շովհաննես Ե-ի անունները և ապա միայն Շովհաննես Կասաակոպիոսի և Իրենեի:

Տաճարը կոչվում էր սուրբ Գեորգ Պալեոկաստրիտիս, քանզի դրանում էր այն տեղում, որտեղ անցյալում Դիդիմոսիոսի քաղաքի այսպես ասած հին հիմքն էր, նրա հին բերդը, որը, ինչպես երևում է, կոչվում էր Պալեոկաստրոն: Այդ եղբայրացության ենթ հանդում և նրանից, որ, ինչպես տեսանք փոքր առաջ, տաճարից անմիջապես վերև գտնվող մասը, որտեղ ժայռերի մեջ կան արհեստական մեծ խորշեր և որոնց մեջ կառուցված էին հին շինություններ, բնակարաններ և այլն, ավելի հին դիդիմոսիոսիոսները կոչվում են «Պալիոս» (Հին): Սուրբ Գեորգ Պալեոկաստրիտիսը, ինչպես երևում է, հին վանք էր, որտեղ բյուզանդացիները տոնավաճառներ էին կազմակերպում: Այնտեղ էին գնում բազում ուխտավորներ, իսկ հետագայում. նաև հայ ուխտավորներ, ինչպես պիտի տեսնենք ստորև:

Հայկական աշխարհության համաձայն դա մի փոքր մատուռ էր, որ գտնվում էր այնտեղ, որտեղ այժմյան տաճարի հյուսիսային կողմի արևելյան ծայրում կա նրան կցված քառակուսի մի սենյակ, որը ծառայում է որպես մկրտարան և ավանդատուն:

Բոլոր դեպքերում մատուռ էր դա, տաճար թե՛ վանք, Դիդիմոսիոսի հույների կողմից այն տրամադրվեց իրենց համաքաղաքացի հայերին. Բայց է՞րբ և ինչպե՞ս:

8. Ե՛րբ ոտագնաց մայրը ճիշյալ տաճարը: Կառավարական պաշտոնական փաստաթղթեր: Այն ավանդությունը, որ սուրբ Գեորգի տաճարը իբր վաճառվեց հայերին 175 ղուրդի սիմվոլիկ մի դոմարով 1795 թ. (1), անհիմն է: Կա փաստ, որ այդ տաճարը պատկանում էր հայերին 1704 թվականից էլ առաջ. տաճարի բակում պահպանվել է մի տապանաքար՝ էքմեթը Սերգիզի, որ մեռել է թաղվել էր 1704 թ.: Բացի այդ Կըզըլ դերեից այն կողմ գտնվող հայկական գերեզմանատանը կան երկու հարյուր տարվա հնություն ունեցող գերեզմաններ:

Բայց կա ավելի ղորավոր պաշտոնական տվյալ, որ տաճարը հայոց ձեռքում էր 1704 թվականից բազում տարիներ առաջ. մենք հասնում ենք մինչև 1526 թվականը և դրանից էլ առաջ: Դիդիմոսիոսի հայկական համայնքում պահպանվում են վեց պաշտոնական բերաթղթեր և առկա կառավարական փաստաթղթեր, որոնք, ինչքան դա հնարավոր էր, թարգմանեցինք Դիդիմոսիոսիոսիում նստող էվրոս նահանգի մահմեդականների մուֆթի իմամ Զադե Վելիուտդին էֆենդիի միջոցով և փաստաբան պր. Կ. Արզիրիադիսի օգնությամբ, որոնց և հրապարակայնորեն հայտնում ենք մեր հերմազին շնորհակալությունը: Այս փաստաթղթերը տրված են հիշյալի 1133, 1163, 1191, 1223, 1230 և 1244 թվականներին, այսինքն մ. թ. 1726, 1756, 1777, 1808, 1815 և 1826 թթ.:

Առաջին փաստաթուղթը (1726 թ.) վկայում է, որ հայոց տաճարը, որը վերակառուցվել էր 100 և 200 տարի առաջ, ավերակ էր դարձել, որ Կոստանդնուպոլսի հայկական պատրիարքարանի ջանքերով կատարվեցին անհրաժեշտ օրինավոր դիմումներ և հարցը տեղում քննվելուց հետո կառավարությունը թույլատրեց վերակառուցումը, և որ, վերջապես, տաճարը գտնվում էր հայոց ձեռքում նախքան «փառապանծ օրերը» (կամ գուցե «փառապանծ ժամանակները»):

Ասվածից ստացվում է, որ տաճարը հայերի կողմից վերակառուցվել է բազմիցս՝ 1526-ին և 1626-ին, ինչպես և 1726-ին, և որ այն նրանց էր պատկանում նախքան 1526 թ.:

Եթե «փառապանծ օրերի» տակ հասկանանք Կոստանդնուպոլսի առումը թուրքերի կողմից, նշանակում է, որ հայերը տաճարն ստացան նախքան (կամ սկսած) 1453 թ., եթե դրա առկա հավանանք Դիդիմոսիոսիոսի առումը, այն ժամանակ հասնում ենք 1361 թ.: Եթե, վերջապես,

«փառապանծ օրերի» տակ հասկանանք 1453 թ. հետո ընկած թուրքերի համար նշանավոր մի ժամանակաշրջան, ապա պետք է սահմանափակվենք 1453 և 1526 թթ. միջև ընկած տարիներով: Ինչպես մեզ ասաց պրն. Գեորգիոս Վաֆիադիսը, մի քանի տարի առաջ վախճանված հայո- նի հնագետ Լամբուսիադիսն այս տաճարը հույների կողմից հայերին տրամադրելու թվական էր համարում 1543 թ.: Լամբուսիադիսի այս հաղորդումը, ինչպես երևում է, բանավոր էր, քանզի երա՛կարդացածս պատմական հղմածներում և նշումներում որևէ բանի չհանդիպեցինք, իսկ այս թվականը, այսինքն 1543 թ., հավանաբար, նրա սխալ հաշիվների հետ է կապված, փո- խանակ նշելու 1526-ը կամ 1453-ը:

Բոլոր դեպքերում մեզ համար հաստատն այն է, որ բյուզանդական պատմական սուրբ Գեորգ Պալենկաստրիտիսի տաճարը հայերի ձեռքն անցավ բավական հարյուրամյակներ առաջ, գուցե 1361—1526 թթ. միջև, կամ ավելի շուտ, 1453—1526 թթ. միջև:

Երկրորդ փաստաթուղթը (1756 թ.) հաղորդում է, որ հայ Կարապետ Ալեքսյանի դիմումի ստիժիվ քննության ենթարկվեց տաճարի շրջակա հողամասերի տերերի հարցը: Գիդիմտոնիսոնի կադիի (հոգևոր ատյանի նախագահի) կողմից որոշվեց տաճարի տարածության ընդարձակումն ու նրա վերանորոգումը՝ ընդդեմ Կարապետի պահանջների, որի դիմումը մերժվեց:

Երրորդ փաստաթուղթը (1777 թ.) հաղորդում է, որ հողամասի վերոհիշյալ տերը՝ Կարա- պետը, դարձյալ է դիմել, որպեսզի տաճարից ետ ստանա իր հողամասը, որը տաճարի տարա- ծույթյան ընդարձակման առթիվ, ուրիշների հողամասերի հետ, իրենից խլվել է: Նրա պահանջն արդար համարվեց, բայց, հակառակ դրան, իր և տաճարի վարչության ընդհանուր համաձայնու- թյամբ որոշվեց, որ վեճի առարկա հողամասը մնա տաճարի իրավասությանը, պայմանով, որ Կարապետի անունը տաճարում հիշվի որպես նրա վերանորոգողի, այնպես, ինչպես հիշատակ- վում էին և այլ հողամասերի տերերի և վարչության անդամների անունները:

Այսպիսով, տաճարը վերանորոգվեց և նրա շրջակա տարածությունն ընդարձակվեց:

Գեորգ Փափաղյանի բանավոր հաղորդման համաձայն սուլթան Սելիմ 3-րդի և Կոստանդնու- փուլի հայ պատրիարք Ջաֆարիա Կաղզվանցու օրոք տրվեց կայսերական իրադե (հրաման) տաճարի վերանորոգման մասին:

Եթե նման վերանորոգում տեղի է ունեցել, այն չի կարող վերաբերել 1777 թվականի՝ երրորդ փաստաթղթում հիշվածին, ոչ էլ, հարկավ, վեցերորդում՝ 1828 թվականի, որի մասին դեռ խոսք կլինի, քանզի նախ Ջաֆարիան պատրիարք էր երկու շրջանում՝ (1773—1781 և 1782—1789 թթ.), իսկ սուլթան Սելիմ 3-րդը թագավորեց 1788-ից մինչև 1808 թ.: Ինչ վերաբերում է չորրորդ (1808 թ.) և հինգերորդ (1815 թ.) փաստաթղթերին, ապա գրանցում տաճարի վերանորոգման մասին խոսք չկա:

Վերոհիշյալից ստացվում է, որ Փափաղյանը կամ սխալ տեղեկություններ ունի և կամ էլ այդ վերանորոգումն իսկապես տեղի է ունեցել, բայց դրան վերաբերող կառավարական փաստա- թուղթ չի պահպանվել:

Չորրորդ փաստաթուղթը իրենից ներկայացնում է պատճենը սուլթանական շրջաբերականի, որ հրապարակվեց ամբողջ պետության համար սուլթան Մահմուդ 2-րդի՝ վերևում հիշված սուլ- թան Սելիմ 3-րդի հաշորդի, գահակալման առթիվ: Այդ շրջաբերականը ուղղված էր քաղաքա- ցիական, կրոնական և այլ խշխանությունների, որով բոլոր ազգերին կոչ էր արվում ապրել խա- ղաղ, որպեսզի բարգավաճեն, պաշտպանվեն եկեղեցիների և վանքերի իրավունքները: Բոլորը հարդեն կրոնական առաջնորդներին, քրիստոնյաների և այլ ազգերի պաշտպանության կառա- վարական հատուկ գրասենյակի կողմից նրանց բողոքներն ու դիմումները նկատի էին առնվել: Բայց ինչպես սովորաբար, հակառակ ժամանակ առ ժամանակ հրապարակվող սուլթանական շրջաբերականներին ու կարգադրություններին, կառավարական տարբեր պաշտոնյաների չարա- շահումները և պետության տարբեր շրջաններում անկարգությունները՝ ի վնաս քրիստոնյաների և այլ ազգերի, հատկապես հայերի, շարունակվում էին: Կոստանդնուպոլսի հայկական թափուր պատրիարքարանի տեղապահ Հովհաննեսը դիմեց կառավարությանը, բողոքելով և պահանջելով, փմիջիայլոց, տաճարների և այլ նման հաստատությունների վերանորոգման ու կառուցման վերա- բերյալ ազատ իրավունք և գործողությունների դուրացում: Կառավարության պատասխանն այն էր, որ բոլորն ազատ են անկաշկանդ գրադվելու իրենց կրոնական և առօրյա այլ գործերով, որպեսզի բարգավաճեն ավելի քան անցյալում, ըստ նոր սուլթանի սիրահոժարության և սրբա- ղան կարգադրության:

Հինգերորդ փաստաթուղթը (1815 թ.) սուլթանական մի հրաման է, տաճարի մոտ գտնվող ավերակ վանքի վերակառուցման վերաբերյալ: Այդ վանքը վերջերս շատ էր խաբխվել և ան- քործածելի դարձել, դրա համար 1931 թ. այն քանդվեց, ինչպես կասվի ստորև: Վերջապես վեցե- Լուբեք 9—6

որոշ փաստաթուղթեր (1828 թ.) վերաբերում էր այդ միջոցին դարձյալ ավերակ դարձած տաճարի վերակառուցմանը։ Ազդեցությունների հայ մետրոպոլիտը եկավ Դիզիմոտիսոն, գումարվեց Խեղի Նայերի ընդհանուր ժողով՝ նախագահությամբ մետրոպոլիտի, որից հետո նրանք դիմեցին Կոստանդնուպոլսի հայ պատրիարքին։

Այդ շրջանում Դիզիմոտիսոնի կազան, որի կայմական էր Վեշիսի Մհմետ փաշան, են-
ֆարկվում էր էսառ փաշային, Ազդեցությունների մոտ գտնվող Չիրմեն քաղաքի մոթեշերֆին, Կառավարական հատուկ կարգադրությամբ և Դիզիմոտիսոնի կազի Նայեր-Ալի էֆենդիի նախա-
գահությամբ արտակարգ ժողով գումարվեց, որին մասնակցեցին նաև թուրքեր և հայեր։ Հարցի
ընթացքում և հատուկ խորհրդակցությունից, օրենքով նախատեսվող զանազան ձևակերպու-
թյուններից ու նախապատրաստություններից հետո որոշվեց և Ցաննի կալֆայի կողմից սկսվեց
տաճարի վերակառուցումը։ Այն ավարտվեց, ըստ Գեորգ Փափագյանի տեղեկությունների, երեք
տարի հետո, այսինքն՝ 1831 թ., Պողոսի պատրիարքության օրոք։ Նավակատիքը տեղի ունեցավ
Ընուր Լարսեղի տոնի օրը։ Այն պատճառով, որ այդ օրերին առատ ձյուն էր տեղացել և ցամա-
քով հանապարհորդելը դարձել էր անկարելի, դեռ երկաթգիծ չկար, իսկ էլիոս գետը նավարկելի
էր, բազմաթիվ պաշտոնական հրավերյալներ և այլ ուխտավորներ Ազդեցություններից Դիզիմոտի-
սոն եկան նավակներով ու մակույկներով։

Մկրտարանի մի արձանագրությունից կարելի է հանգել այն եզրակացության, որ բարա-
շեն մկրտարանը կառուցվել է 1824 թ.։ Հետևաբար տաճարի վերակառուցման ժամանակ, ու
սկսվեց 1828-ին և ավարտվեց 1831-ին, ավանդատուն ու մկրտարանը գոյություն ունեին, դրա
համար էլ թողնվեցին ինչպես որ կային։

9. Վաճառված շենքեր օրպես հյուրանոց։ Տոներ և տոնավաճառներ։ Վաճառված շենքի ֆունդամենտը։
Այժմ անցնենք հինգերորդ փաստաթղթում հիշվող վանական շենքին։ Հայերն այն որպես կա-
նոն օգտագործում էին իբրև հյուրանոց, որտեղ բնականաբար օթնանում էին՝ որպես ուխտավոր,
կամ այլ գործով Ազդեցություններից, Թրակիայից և այլ տեղերից Դիզիմոտիսոն եկող հայերը։
Դրանից Դիզիմոտիսոնի հայկական համայնքը զգալի եկամուտներ ուներ՝ և՛ դրամով, և՛ ուխ-
տավորների՝ տաճարին տրվող նվերներով, հատկապես մեծ տոներին և տոնավաճառներին։ Այդ-
պիսիք էին 1) Քրիստոսի Այլակերպության տոներ, որը հայերը նշում են Զատիկից 99 օր հետո,
2) խաչվերացի տոներ, 3) Վարագա իսաչի, որ նշվում է նախորդից 15 օր հետո, 4) Սուրբ Գեորգի,
որ նշում են նախորդ տոնի նախօրեին, 5) և հատկապես Աստվածածնի Նշման։ Վանքի այս
շենքը, որ ինչպես տեսանք վերակառուցվել էր 1815-ին, վերաշինվեց դարձյալ 1838-ին, ինչը
եզրակացնում ենք տաճարի բակի մեծ դարպասի վրա ամրացված մարմարյա արձանագրու-
թյունից։ Հայերեն գրված այս արձանագրությունը (հունարեն) թարգմանությամբ հետևյալն է.
«Անցյալում կառուցված այս վանքը, որ հնացել էր ու ավերակ դարձել, սեփական ծախսերով
շինել էր բիսկյանցի Հաշի Ստեփան աղան։ Արդ, Լանչիյան ընտանիքից բարեպաշտ Հաշի եա-
շատուրը իր ծախսով վերակառուցեց՝ ի փառս Բարձրյալի և Ամենաբարի Աստուծո, որ պահպանի
այն պայծառ ու շին ի փառս ազգիս հայոց։ Թվին Քրիստոսի 1838 մայիսի 30»։

Վանքը, որովհետև դրա կարիքն ուներ, Փափագյանի ասելով վերանորոգվեց նաև 1896-ին։
Բայց դրանից հետո աստիճանաբար կատարյալ ավերակ դարձավ։ Եվ քանի որ հայկական հա-
մայնքը վերջին պատերազմական տարիների և տնտեսական սոսկալի ճգնաժամի պատճառով
ոչ թե վերակառուցման, այլ հասարակ նորոգման հնարավորություն չուներ, ստիպված ա-
յն քանից, փրկելու համար, ինչքան դա հնարավոր էր, նշմանը և փայտանյութը, օգտագործելու
համար որպես վառելիքայտ, ինչպես և տաճարի ու դպրոցի կարիքների համար։

10. Հայկական ցեղեղ համայնքը։ Չին և Եոթ դպրոցը։ Ներկայումս հայկական համայնքը
չիք է, ինչպես և անցյալում և բաղկացած է 38 ընտանիքից (150 հոգի)։ Գեորգ քահանայի
ժամանակ, ինչպես և հետագայում մեծ հոգ էր տարվել տաճարի և դպրոցի մասին։ Դպրոցը
գտնվում էր տաճարի բակից դուրս, նրա ետևի մասում և նրանց կից կային մի շարք սենյակ-
ներ, որտեղ հյուրընկալվում էին առանց ընտանիքների ժամանող ուխտավորները։ Սենյակներն ու
դպրոցն ավերվեցին նաև 1881 թ.։ Կատարողորոն քաղաքի ստորին մասում, ժամացույցի վե-
րում կառուցվեց այլ դպրոց՝ Դիզիմոտիսոնի կառավարիչ Զորչի փաշայի և Ազդեցությունների
նախագահ Կադրի փաշայի իշխանության օրոք։ Դպրոցն ունի վեց դասարան, 25 աշակերտ
ու աշակերտուհիներ և երկու ուսուցչուհի։